

ԿՈՂԿԱՄՄԻ ՀԱՅԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅՈՒՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆՆ

Լրագիրներից տեղեկանում ենք, որ անցեալ զեկտ. 18-ին Կով. Հ. Բար. Ընկերութիւնը հանդիսաւոր կերպով աօնել է իւր գործունէութեան ՅՈՒՄԵԱՅ յօրելեանը Այդ օրը Թիֆլիսի արտիստիքական ընկերութեան դահլիճում տեղի է ունեցել յօրելեանական հանդիսի բացումը, ուր ներկայ են եղել մի շարք հայ հոգևորականներ, ընկերութեան բաղմաթիւ անդամներ, ներկայացուցիչներ զանազան հիմնարկութիւններից: Ընկերութեան նախագահն առ. Ա. Յարութիւնները բանալով ժողովը, առաջարկել է ընտրել ընդհանուր ժողովի նախագահն, որպիսին ընտրուել է ընկերութեան հիմնադիր պ. Բ. Նաևասարդեանը: Ժողովականների միահամուռ ցանկութեամբ ընկերութեան պատուաւոր անդամներ են ընարաւել Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փօխարքոյ, գեներալ-ադիւտանտ գրամփ Խ. Ի. Վարանցով Դաշկով և իւր ամուսին սատան-դամա գրամփունի Ելիզաւետա Անդրէենան: Մյուս հետեւ ժողովը յոտնիայս յարգել է հոգելոյս Հայրապետ Իզմիրլեանի յիշատակը, որից յետոյ կարդացել է Ընկերութեան ՅՈՒՄԵԱՅ գործունէութեան համառօտ նկարագիրը: Արտասանուել են մի շարք յօրելեանական ճառեր, և յետոյ կարդացուել են ստացուած շնորհաւորական հեռագիրները:

Աղջունելով Բարեգ. Ընկերութեան ՅՈՒՄԵԱՅ կեանքը, ցանկանք, որ նա զես երկար տարիներ շարունակէ կատարել իւր զեկցիկ միստիան:

Ցիշեալ Ընկերութեան գործունէութեան սահմաններին ծանօթացնելու համար թերում ենք այն կոչը, որ հրատարակւած է «Ճարագ»-ի № 12-ում:

ԿՈՉ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւն

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը ներկայ 1911 թւին բոլորեց իր գործունէութրան երեսնամեակը: Ընկերութեան կանոնադրութիւնը հաստատուած է 1881 թւին, իսկ առաջին ընդհանուր ժողովը տեղի է ունեցել նոյն տարւայնոյեմբերի 15-ին: Թէ որպիսի նպատակ ունի յիշեալ պատկանելի ընկերութիւնը հայկական կեանքում, այդ մանրամասնօրէն նկա-

բազրւած է նրա յօրելեանական պատկերագարդ հրատարակութեան մէջ, Բաւական է յիշել, որ նա մեր հայկական իրականութեան մէջ մեծ և նշանաւոր կուլտուրական դեր է կատարում:

ա) Եերկայիս Ընկերութիւնը Կովկասում դանուած հայկական բոլոր աչքի ընկնող վայրերում ունի 48 ճիւղեր:

բ) Թիֆլիսում պահում է որբանոց, ուր սնւում են 33 որբ հայ աղջիկներ, և որոնք ուսում են առնում հայկական գպրոցներում:

գ) Ունի հարուստ գրադարան-ընթերցարան, որոնցից օգտում են ամիսը 3000 հոգուց աւելի անձննք:

դ) Պահում է աշակերտական ճաշաբան, որից օգտում են օրական 300-ից աւելի շքաւոր աշակերտաշակերտունիներ:

ե) Արժեքաւոր երկեր հրատարակելու համար ունի առանձին «Հրատարակչական ֆօնդ», որ կազմուած է Ա. Պողոսեանի նսիրուած գումարով:

զ) «Արովեան-Նապարեան գրական ֆոնդ»՝ հայ պրականագէտներին նպաստելու համար:

է) Օգնում է թէ կենտրոնում և թէ գաւառից եկած բազմաթիւ կարօտեալներին ու հիւանդներին և զործն դեր է կատարում ժողովրդական ընդհանուր աղէտների՝ սովի, հրդեհների և զանազան համաճարակ հիւանդութիւնների ժամանակ:

ը) Օգնութեան ձեռք է կարկառում հայրենիք վերադառնալ ցանկացող հազարաւոր տաճկանայ գաղթականներին:

թ) Բացի վերոյիշեալներից, կ. Հ. Բ. Ընկերութիւնը առանձին ուշադրութիւն է գարձնում զաւառի շատ յետ մնացած հայ աղքարնակութեան մէջ լուսաւորութեան տարածման վերայ, նպաստելով զիւղական մօտ 100 աղքատ գպրոցներին:

ժ) Գաւառներում ղահում է գրադարաններ, ընթերցարաններ, արհեստանոցներ և այլ հանրօգուտ հիմնարկութիւններ:

Վերոյիշեալ ուղղութեամբ գործում են նաև Ընկերութեան ձիւղերը՝ ըստ չափու իրանց կարողութեան:

կ. Հ. Բ. Ընկերութիւնը՝ քաջ գիտակցելով լուսաւորութեան ահապին դերը հասարակական կեանքի յառաջախաղացման մէջ և տեսնելով հայ աղքարնակութեան խոշոր մասի ահռելի տդիտութիւնը, առանձնապէս ուշադրութիւն է գարձնում յոյժ կարեւոր գործի վրայ, և իրեւ ամենակարեւոր և խոշոր կոթող նրա յօրելեանի, նա վճռեց յաւերժացնել վերջինս, հիմնելով «ԴՊՐԱՇԱԿԱՆԵՐԻՍՈՒԽԶՁԱԿԱՆ ՖՈՆԴ»՝, որի նպատակն է լինելու, առաջին՝ աւելի լայն ծաւալով տարածել լուսաւորութիւնը հայ աղքարնակութեան մէջ և երկրորդ՝ օգնել այն բազմաշխատ հայ ուսուցիչներուց:

չունիներին, որոնք երկարատև ու ծանր աշխատանքից դարձել են անզօր՝ իրանց գոյութիւնը պահպանելու, տալով նրանց կամ միանւագ նպաստ կամ նշանակելով կենսաթոշակ:

Անհուն բերկութեամբ պիտի յիշատոկել, որ թէկ, բարեբախտաբար, մեզ մօտ գտնուել են բարեբարներ, որոնք՝ ժողովրդական լուսաւորութեան կարեորութիւն գիտակցելով, արձագանդ են տւել ընկերութեան ձայնին, օգնութեան ձեռք կարկառելով լուսաւորութեան տարածման համար, որոնց անունները, պատկերները և գործերը տպուած են յօրելեանական հրատարակութեան մէջ, սակայն այդ բոլորը մի կաթիլ է կարեաց ովկիանոսում:

Կ. Հ. Բ. Ընկերութեան Խորհուրդը լիայոյս է, որ հայ հասարակութեան բոլոր խաւերն ի բոլոր սրաէ արձագանդ կը տան ներկայ կոչին և, ի նկատի ունենալով ընկերութեան բեղմնաւոր կուլտուրական մեծ գերը հայկական կեանքում, իրանց առատ նւիրատութեամբ թէ կը խրախուսեն և թէ ոյժ կը տան ընկերութեանը աւելի և արգասաւոր կերպով և մեծ ծաւալով արտայայտելու իր գործունէութիւնը՝ գլխաւորապէս գիւղական աղքատ և տգէտ աղգարնակութեան մէջ:

§ 2. Եյս նպատակին հոսնելու համար Ընկերութիւնը՝ օրէնքով սահմանած միջոցներով ու կարգով իր ուժերի դարպացման համեմատ՝

ա) Պահպանում է արգէն գոյութիւն ունեցող հայոց ուսումնաբանները, հիմնում է և նիւթականապէս նպաստում է նորերի բացման:

բ) Օժանդակում է ժողովրդի մէջ արհեստներ տարածելուն:

գ) Օգնում է ուսանողներին ուսման մէջ:

դ) Լոյս է ընծայում գրքեր ու պարբերական հրատարակութիւններ ժողովրդի ընթերցանութեան համար և այլ գրական երկասիրութիւններ:

ե) Հիմնում է տպարաններ, վիմագրատներ, մուգէյումներ, գրադարաններ և ընթերցարաններ:

զ) Հիմնում է հիւանդանոցներ, ամբուլատօրիաներ (հիւանդանոց երթեսեկ հիւանդների համար), աղաստարաններ, հասարակական ճաշարաններ, թէյարաններ, էժանագին բնակարաններ, գիշերելու աներ, պատսպարաններ, հանրակացարաններ, աշխատանքի աներ և այլ բարեգորկական հաստատութիւններ:

է) Օգնում է տառապեալներին ժողովրդական աղէտների ժամանակ, այն է՝ սովոր, տարափոխիկ հիւանդութիւնների, հրդեհի և այլն, որի համար՝ իւրաքանչիւր առանձին դէպքում, պատշառ-

ճաւոր թոյտւութեամբ՝ բացում է հանդանակութիւն, կազմակերպում է սանիտարական մասնախմբեր կամ ուղարկում է իր կողմից լիազօրներ:

ը) Օդնում է կարեոր դէպքերում նիւթականապէս և բարոյապէս իր տեղական ճիւղերին, ինչպէս և հայկական այլ ընկերութիւններին և հաստատութիւններին:

Նախագահ՝ Սաման Յարութիւնեան

Փոխանախագահներ՝ { Նփրեմ Կայխուպաս Սուբիասեան
 Եւխոնտիկ Մարտիր Թումանեան

Անդամներ՝ { Առօսամեան Հեղինէ
 Ազասաւեան Բողդան
 Լիսիցեան Սահմակ
 Մելքոնմեան Մարգիս
 Մխիթարեան Արամ
 Շահիթեան Աղքամիզը

Անդամ-դանձապահ՝ Զաքորիա Մամոյեան

Անդամ-քարտուղար՝ Յակովիլը Շահնազարեան

